ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/13, 18.04.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Այթիոեսուրսիս» ՍՊԸ

Պատվիրատու՝ Սոցիալական ապահովության ծառայություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկան՝ ծրագրային ապահովման սպասարկման ծառայություն.

Բողոքի պահանջը՝

Չկայացած հայտարարել Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ժ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 23շ., բն. 64
հեռ: 044883366
Էլ.փոստ՝ d.shahbazyan@itresources.am

Պատվիրատու՝ Սոցիալական ապահովության ծառայություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար <<Ծրագրային ապահովման սպասարկման>> ծառայությունների գնման նպատակով հայտարարված <<ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6>> ծածկագրով գնանշման հարցում

ԲՈՂՈՔ

- <u>Բողոքի նախապատմությունը և փաստերը</u>

Սոցիալական ապահովության ծառայության /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար <<Ծրագրային ապահովման սպասարկման>> ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է <<ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով ի թիվս այլ մասնակիցների էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն:

Սակայն 15.03.2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի հայտի պիտանելիության, տեխնիկական և ֆինանսական չափորոշիչներից ոչ մի փաստաթուղթ ներբռնված չէ համակարգում, գնային առաջարկի լրացման դաշտը լրացված չէ:

Իսկ նույն արձանագրության 4.բ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժեց «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ համակարգում գնային առաջարկի լրացման դաշտը լրացված չլինելու և հայտի փաստաթղթերը ներբեռնված չլինելու հանգամանքով պայմանավորված:

15-16001-13

Անհրաժեշտ է նշել, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով գտնվում առկա է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ վերոհիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

- <u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով *մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:*

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, *ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և

գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Չկայացած հայտարարել Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԱԾ ԳՀՇՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգը:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Շահբազյան

10.04.2019թ.